

Համարը  
Տիպը Համաձայնագիր  
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2015.12.30/4(34)  
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն  
Ստորագրող մարմինը  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 24.11.2015

Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 07.10.2015  
Ստորագրման ամսաթիվը 07.10.2015  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝  
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕԿԵՐԱՏԻՎ ԻՐԱԶԵԿԿՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ ՈԱԴԻԱՑԻՈՆ  
ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

### Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման և միջուկային և ռադիոակտիվ անվտանգության բնագավառում տեղեկատվության փոխանակման մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը,  
այսուհետ՝ Կողմեր,  
հիմք ընդունելով 1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման  
մասին կոնվենցիան,  
առաջնորդվելով 1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային  
իրավիճակների դեպքում օգնության մասին կոնվենցիայի սկզբունքներով,  
հիմք ընդունելով 1994 թվականի հունիսի 17-ի՝ միջուկային անվտանգության մասին կոնվենցիան,  
ղեկավարվելով 1992 թվականի հունիսի 26-ի՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու  
բնագավառում համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրով, 2000 թվականի  
սեպտեմբերի 25-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության  
Կառավարության միջև՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու բնագավառում  
համագործակցության վերաբերյալ համաձայնագրով, 2010 թվականի օգոստոսի 20-ի՝ Հայաստանի  
Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի  
Հանրապետության տարածքում ատոմային կայանի նոր էներգաբլոկների կառուցման հարցում  
համագործակցության մասին համաձայնագրով, 2014 թվականի դեկտեմբերի 20-ի՝ Հայաստանի  
Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ հայկական  
ատոմակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության  
մասին համաձայնագրով,  
հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում են  
Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամներ և 1979 թվականի հոկտեմբերի 26-ի՝ միջուկային  
նյութի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիայի անդամներ,  
հաշվի առնելով, որ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության և  
Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ստորագրվել է միջուկային անվտանգության ոլորտում  
համագործակցության մասին համաձայնագիր,  
ընդունելով ատոմային էներգիայի օգտագործման ժամանակ անվտանգության նպատակների  
առաջնայնությունը յուրաքանչյուր մարդու և, ընդհանուր առմամբ, հասարակության շահերում,  
ծգտելով միջուկային և ճառագայթային անվտանգության բնագավառում միջազգային համագործակցության  
հետագա ամրապնդման,  
առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ձգտումով՝ զարգացնել և  
խորացնել գործընկերային հարաբերությունները միջուկային և ճառագայթային անվտանգության բնագավառում՝ ի  
շահ երկու երկրների ժողովուրդների,  
նպատակ ունենալով սահմանելու Կողմերի պետությունների տարածքներում միջուկային վթարների և  
պատահարների մասին օպերատիվ իրազեկման անհրաժեշտ տեղեկատվության և փորձի փոխանակման  
սկզբունքները՝ հաշվի առնելով ռադիոակտիվ նյութերի հնարավոր միջսահմանային արտանետումը,  
նշելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Գլխավոր համաժողովի 55-րդ նստաշրջանում  
ընդունված՝ միջուկային անվտանգության հարցերով գործողությունների Պլանի իրագործման արդիականությունը,  
համաձայնեցին ներքոնշյալի վերաբերյալ.

## Հոդված 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է 1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման մասին կոնվենցիայի 1-ին և 3-րդ հոդվածներում սահմանված տեղակայանքների կամ գործունեության հետ կապված միջուկային վթարի առաջացման դեպքում Կողմերի միջև համագործակցության, ինչպես նաև միջուկային և ճառագայթային անվտանգության վիճակի մասին տեղեկատվության փոխանակման պայմանները:

Սույն Համաձայնագիրը, միջուկային և ճառագայթային անվտանգության վիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասով, տարածվում է ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու բնագավառում այն տեղակայանքների և գործունեության տեսակների վրա, որոնք նշված են 1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածում:

## Հոդված 2

Կողմերից մեկի պետության տարածքի տեղակայանքում կամ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնելիս միջուկային վթարի դեպքում, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել ռադիոակտիվ նյութերի միջսահմանային արտանետման մյուս Կողմի պետության տարածք, այն Կողմը, որի պետության տարածքում տեղի է ունեցել այդպիսի միջուկային վթար, այդ մասին անհապաղ հայտնում է մյուս Կողմին և նրան է փոխանցում ունեցած ամբողջ տեղեկատվությունը այդ միջուկային վթարի մասին՝ 1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածին համապատասխան՝ ճառագայթային հետևանքները նվազագույնի հասցնելու նպատակով:

## Հոդված 3

Եթե Կողմ պետություններից մեկի ճառագայթային հսկողության համակարգը գրանցում է ռադիացիոն անվտանգության նորմերի համեմատությամբ ճառագայթային վիճակի վատթարացման փաստ, և այդ փոփոխությունները կապված չեն միջուկային տեղակայանքի կամ այդ Կողմի պետության տարածքում գործունեության հետ, ապա այդ Կողմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին և նրան տեղեկացնում է իրավիճակի հետագա զարգացման մասին:

## Հոդված 4

1. Կողմերը իրենց իրավասու մարմինների միջոցով ամեն տարի (եթե չկա օպերատիվ անհրաժեշտություն կամ Կողմերի այլ պայմանավորվածություն), փոխանակում են միջուկային և ռադիացիոն անվտանգության մասին տեղեկություն, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով:

2. Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով որոշում են փոխանցվող տեղեկատվության ծավալը և այն տեղակայանքների ցանկը, որոնք նշված են սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում:

## Հոդված 5

1. Սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում Կողմերը չեն իրականացնում այնպիսի տեղեկատվության փոխանցում, որի փոխանցումն արգելված է Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությամբ, կամ որի փոխանցումը չի համապատասխանում միջազգային այն պայմանագրերին, որոնց մասնակից են Կողմերի պետությունները:

2. Տեղեկատվությունը, որը փոխանցվում է սույն Համաձայնագրի շրջանակներում կամ ստեղծվում է դրա իրականացման արդյունքում և Կողմերի կողմից դիտարկվում է որպես գաղտնիության պահպանում պահանջող տեղեկատվություն, հստակ որոշվում և նշվում է որպես այդպիսին:

Այնպիսի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը, որոնք Հայկական կողմը դիտարկում է որպես ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվություն, պետք է ունենան «Ծառայողական գաղտնիք» նշումը:

Այնպիսի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը, որոնք Ռուսական կողմը դիտարկում է որպես սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվություն, պետք է ունենան «Ծառայողական օգտագործման համար» նշումը:

Կողմերն առավելագույնս սահմանափակում են այն մարդկանց շրջանակը, որոնց համար հասանելի է այդպիսի տեղեկատվությունը, և ապահովում են դրա օգտագործումը միայն սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներով:

Այդպիսի տեղեկատվությանը Հայաստանի Հանրապետությունում վերաբերվում են որպես ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվության, Ռուսաստանի Դաշնությունում՝ որպես սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվության:

Այդպիսի տեղեկատվությունն ապահովվում է Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությանը համապատասխան պաշտպանությամբ:

Ամբողջ տեղեկատվությունը, որը փոխանցվում է սույն Համաձայնագրի շրջանակներում կամ ստեղծվում է դրա իրականացման արդյունքում, չի հրապարակվում և չի փոխանցվում երրորդ կողմի՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3. Այդպիսի տեղեկատվության փոխանցման կարգը որոշվում է Կողմերի կողմից, յուրաքանչյուր առանձին դեպքի համար՝ Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 6

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումն իրականացվում է անվճար հիմունքներով:

2. Այն Կողմը, որն ստացել է տեղեկատվություն մյուս Կողմից՝ սույն հոդվածին համապատասխան, իրավունք ունի հայցելու լրացուցիչ պարզաբանումներ:

## Հոդված 7

1. Կողմերի՝ սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու իրավասու մարմիններն են. Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, Ռուսական կողմից՝ «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիան: Իրավասու մարմինների, դրանց անվանումների կամ գործառույթների փոփոխության դեպքում Կողմերը նման փոփոխության մասին միմյանց տեղեկացնում են գրավոր, դիվանագիտական ուղիներով:

2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի իրավասու մարմինները համատեղ կմշակեն և կհաստատեն սույն Համաձայնագրի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունների կատարման գործնական միջոցառումները, այդ թվում՝

1986 թվականի սեպտեմբերի 26-ի՝ Միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման մասին կոնվենցիայից բխող՝ Կողմերի պետությունների պարտավորությունների իրականացման գծով կապի կետերի ռեկվիզիտների ցանկը, տեղեկատվության փոխանցման ընթացակարգը, ձևերը, ինչպես նաև կապուղիների ստուգման կանոնակարգերը:

3. Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչները, ըստ անհրաժեշտության, բայց առնվազն տարին մեկ անգամ, անցկացնում են հանդիպումներ սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության հարցերի քննարկման համար:

## Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

## Հոդված 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ կամ փոփոխություններ՝ համապատասխան արձանագրություններ կնքելու միջոցով, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգով:

## Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման և (կամ) մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի իրավասու մարմինների միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

## Հոդված 11

Սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված ցանկացած տեղեկատվության փոխանակման նպատակների համար օգտագործվում է ռուսերենը:

## Հոդված 12

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական

ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը Կողմերի կողմից դիվանագիտական ուղիներով ստացման ամսաթվից:

2. Սույն Համաձայնագիրն անժամկետ է:

3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը այդ մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է վեց ամիս հետո՝ հաշված այդպիսի ծանուցման ստացման ամսաթվից:

4. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում Կողմերի այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք առաջացել են սույն Համաձայնագրի իրականացման արդյունքում՝ մինչև դադարեցումը, եթե Կողմերը չունեն այլ պայմանավորվածություն:

Կատարված է Երևան քաղաքում, 2015 թվականի հոկտեմբերի 7-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն. ընդ որում՝ երկու տեքստերն էլ համազոր են:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015թ. նոյեմբերի 24-ին*